ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1948-Ա « 14 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածով.

1. Հաստատել Երևանի ենթակայության.

1) «Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոց», «Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց», «Ձայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոց», «Երևանի Մ. Միրզոյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Ա. Ցիցիկյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Կ. Սարաջյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Տ. Չուխաջյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Ալ. Աճեմյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Ս. Ասլամազյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց», «Երևանի Ռ. Անդրեասյանի անվան երաժշտական դպրոց», «Վիլլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Ստ. Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոց» և Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի «Անուշավան Տեր-Ղևոնդյանի անվան N1 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2026 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները համաձայն հհ. 1-30 հավելվածների:

2. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին.

1) եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով «Պարգևատրում» հոդվածի գծով նախատեսված գումարները, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակահատվածի վերջին նախատեսված դրամական

միջոցների ազատ մնացորդներն օգտագործել բացառապես Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության, Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության հետ համաձայնեցնելուց հետո,

2) բացառել կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով նախատեսված հոդվածների գծով գերածախսերը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի, Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ